# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Վերին Պտղնի բնակավայր 23.04.2025 թ.

2025 թվականի ապրիլի 23-ին՝ ժամը 11:30-ին, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Վերին Պտղնի բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Շող-Մակ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Վերին Պտղնի բնակավայրի Նոր թաղամասում նախատեսվող առևտրահասարակական կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Բացման խոսքով հանդես եկավ Աբովյան համայնքի ղեկավարի օգնական Դիաննա Երեմյանը և խոսքը փոխանցեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Քրիստինե Հարությունյանին: Հարությունյանը նշեց, որ փորձաքննության գործընթացն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով և ներկայացրեց փորձաքննության գործընթացը, նշեց, որ փորձաքննության գործընթացին մասնակցել են պետական կառավարման մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՇՄՆ ստորաբաժանումները, խոսեց նախատեսվող գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների և բնապահպանական ռիսկերի մասին: Նշեց, որ նախաձեռնողը ՇՄԱԳ-ում նախատեսել է մի շարք մեղմացուցիչ միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան մեղմելու և նվազեցնելու հնարավոր ազդեցությունները: Հարությունյանը ներկաներին տեղեկացրեց, որ առաջարկություններ ունենալու դեպքում կարող են դրանք ներկայացնել բանավոր կամ ուղարկել «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական էլեկտրոնային փոստին և խոսքը փոխանցեց նախաձեռնողի ներկայացուցիչներին:

Նախագծի հեղինակ Արտակ Մխիթարյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, նախատեսվող գործունեության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ, ներկայացրեց շինարարության աշխատանքների կազմակերպման միջոցառումները և շինարարության փուլում նախատեսվող աշխատանքները և խոսքը փոխանցեց ընկերության բնապահպանական մասի պատասխանատու Արթուր Մինասյանին: Մինասյանը ներկայացրեց առևտրահասարակական կենտրոնի կառուցման ընթացքում նախատեսվող բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված նախատեսվող

միջոցառումները՝ մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների, հողի որակի հետ կապված: Նշեց, որ հիմնական ազդեցությունները նախատեսվում են կապված փոշու արտանետումների հետ, որի ազդեցությունը մեղմացնելու նպատակով նախատեսվել են միջոցառումներ՝ օրինակ, պարբերաբար իրականացվելու է ջրցան:

Նախատեսվող գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվելուց հետո Հարությունյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ իրենց առաջարկությունները, դիտողությունները ներկայացնելու և հուզող հարցերը հնչեցնելու համար:

Բնակիչները հարց բարձրացրեցին նախատեսվող գործունեության ընթացքում աշխատատեղերի բացման վերաբերյալ, նշելով, որ իրենք ցանկություն ունեն աշխատելու առևտրահասարակական կենտրոնում, ինչին ի պատասխան նախաձեռնողի ներկայացուցիչները նշեցին, որ իրենք պլանավորել են, որ աշխատակիցները կլինեն ազդակիր բնակավայրից:

Քննարկվեցին նաև առևտրահասարակական կենտրոնի կառուցման հետ կապված այլ հարցեր:

Քննարկման ավարտին ներկաները նշեցին, որ ողջունում են առևտրահասարակական կենտրոնի կառուցումը և մաղթեցին հաջողություն:

Ք. Հարությունյանը ամփոփեց հանրային լսումը և շնորհակալություն հայտնեց ներկաներին:

Հանրային լսմանը մասնակցում էին ազդակիր համայնքի բնակիչներ, համայնքի և նախաձեռնողի ներկայացուցիչները:

Հանրային լսման լուսանկարները կցվում են սույն արձանագրությանը:

**Վարող և քննարկումների պատասխանատու՝** **Ք. Հարությունյան**

**«Շող-Մակ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝** **Ա. Մինասյան**